ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆ-ԹՈՒՐՔԻԱ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ

ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

**Առաջարկներ ներկայացնելու հրավեր**

***«Աջակցություն Հայաստան-Թուրքիա կարգավորման գործընթացին»*** *ծրագրի* շրջանակներում **Հայաստանի և Թուրքիայի ութ հասարակական կազմակերպությունների կոնսորցիումը** հայտարարում է դրամաշնորհների մրցույթին մասնակցելու համար առաջարկներ ներկայացնելու հրավեր: Ծրագիրը ֆինանսավորվում է **Եվրոպական միության** «Կայունության գործիք» նախաձեռնության շրջանակներում:

Ծրագրի նպատակն է **աջակցել քաղաքացիական հասարակության ջանքերին՝** ուղղված Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորմանն ու փակ սահմանների բացմանը, մարդկային կապերը զարգացնելու, տնտեսական ու գործարար կապերն ընդլայնելու, մշակութային և կրթական ծրագրեր իրականացնելու, ինչպես նաև անկողմնակալ տեղեկատվություն ապահովելու միջոցով:

Կոնսորցիումի անդամներն են. Հայաստանում՝ Սիվիլիթաս հիմնադրամը (ՍՀ), Եվրասիա համագործակցություն հիմնադրամը (ԵՀՀ), Հանրային լրագրության ակումբը (ՀԼԱ), Տարածաշրջանային հետազոտությունների կենտրոնը (ՏՀԿ), Թուրքիայում՝ Անադոլու Քյուլթյուրը, Թուրքիայի տնտեսական քաղաքականության հետազոտությունների հիմնադրամը (ՏԵՊԱՎ), Հելսինկյան քաղաքացիական ասամբլեան (ՀՔԱ) և Հրանտ Դինք հիմնադրամը:

Ծրագրի անկյունաքարերից մեկը ***ներգրավվածությունն*** է, այն է՝ **երկխոսության գործընթացում ներգրավել և աջակցել նոր դերակատարներին**: Այս նպատակով կոնսորցիումը ստեղծել է դրամաշնորհային աջակցության ծրագիր, որի շրջանակներում անհատներն ու կազմակերպությունները (բացի կոնսորցիումի անդամ-կազմակերպություններից) հնարավորություն կունենան առաջարկելու և իրականացնելու իրենց սեփական գաղափարները դրամաշնորհային աջակցության միջոցով՝ այդ կերպ նպաստելով Ծրագրի ընդհանուր նպատակի իրագործմանը և համատեղ վերջնարդյունքների ազդեցության բազմապատկմանը:

Դրամաշնորհային ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 200,000 ԵՎՐՈ, որի շրջանակներում նախատեսվում է տրամադրել **5,000-ից մինչև 30,000 ԵՎՐՈ** դրամաշնորհներ շուրջ **20 դիմող անհատներին և կազմակերպություններին**:

Դիմումներ կարող են ներկայացնել ինչպես **քաղաքացիական հասարակության կազմակերպությունները** (բացառությամբ կոնսորցիումի անդամների**),** այնպես էլ **անհատները:** Դրամաշնորհային ծրագրի շրջանակում դրամաշնորհներ կարող են տրամադրվել նաև **շահույթ հետապնդող կազմակերպություններին** այն դեպքում, երբ առաջարկվող ծրագիրը նպաստում է Ծրագրի ընդհանուր նպատակի իրագործմանը և դրամաշնորհային միջոցները չեն օգտագործվում շահույթ ստանալու նպատակով: Դիմող կազմակերպությունները պետք է պաշտոնապես գրանցված լինեն Հայաստանում

կամ Թուրքիայում: Դիմող անհատները պետք է լինեն Հայաստանի կամ Թուրքիայի քաղաքացիներ կամ ունենան այդ երկրներում մշտական բնակության թույլտվություն: Դիմումները կուսումնասիրվեն **Գնահատող հանձնաժողովի** կողմից, որի կազմում կներառվեն կոնսորցիումի բոլոր անդամների կողմից նշանակված ներկայացուցիչներ: Դիմումներն ուսումնասիրելիս Գնահատող հանձնաժողովը կղեկավարվի հետևյալ **գնահատման չափանիշներով**.

- Արդյո՞ք առաջարկվող ծրագիրը նպաստում է *«Աջակցություն Հայաստան-Թուրքիա կարգավորման գործընթացին» ծրագրի* ընդհանուր նպատակի իրագործմանը:
- Արդյո՞ք առաջարկվող ծրագիրն արձագանքում է իր թիրախային խմբերի կոնկրետ կարիքների ապահովմանը և սահմանափակումների նվազեցմանը:
- Արդյո՞ք առաջարկվող ծրագիրը ներառում է Հայաստանում և Թուրքիայում գործող կազմակերպությունների և (կամ) այդ երկրներում բնակվող անհատների միջև համագործակցություն կառուցելու բաղադրիչը:
- Արդյո՞ք առաջարկվող ծրագիրն ապահովում է ծրագրի արդունքների կայունության նվազագույն աստիճան՝ ծրագրի ավարտից հետո:
- Առաջարկվող ծրագիրը նորարա՞ր է և ապահովո՞ւմ է «ավելացված արժեք»:
- Արդյո՞ք բյուջեն իրատեսական է և համապատասխանում է առաջարկվող ծրագրային գործունեությանը:
- Արդյո՞ք դիմողն ունի բավարար կարողություններ առաջարկվող ծրագիրը հաջողությամբ իրականացնելու համար:

Կոնսորցիումը կաջակցի իրականացվող ծրագրերի հրապարակայնությանը և նրանց միջև համագործակցության հաստատմանը: Ծրագրերի արդյունքները պարբերաբար կներկայացվեն հանրությանը եռալեզու կայքի միջոցով: Մրցույթում հաղթած դրամաշնորհառուները կներառվեն Կոնսորցիումի տվյալների բազայում և պարբերաբար կստանան թարմ տեղեկություններ Ծրագրի մասին, ինչպես նաև հրավերներ կստանան մասնակցելու Կոնսորցիումի կողմից իրականացվող տարբեր միջոցառումներում:

Կոնսորցիումի կողմից դրամաշնորհային ծրագիրը մեկնարկել է 2014թ.–ի մայիսին և ընդհանուր առմամբ մինչև ծրագրի առաջին վերջնաժամկետը՝ 2014թ.-ի հունիսի 2-ը, ստացվել է 57 առաջարկ, որոնցից 34 առաջարկ՝ Հայաստանից և 23 առաջարկ՝ Թուրքիայից: Գնահատող հանձնաժողովի կողմից հավանության արժանացան 7 առաջարկ, 4 առաջարկ Հայաստանից և 3 առաջարկ Թուրքիայից: Դրամաշնորհային ծրագրի շրջանակում 200,000 եվրո կազմող ընդհանուր բյուջեից արդեն հատկացվել է 130,000 եվրո գումարի չափով ֆինանսավորում: Դրամաշնորհային ծրագիրը կշարունակի երկու երկրների անհատներին և կազմակերպություններին 5,000 եվրոյից սկսած մինչև 30,000 եվրո գումարի չափով դրամաշնորհներ տրամադրել:

Մինչև 2014 թվականի սեպտեմբերի 15-ը ներկայացված ծրագիր-առաջարկների դիտարկման արդյունքները կհայտարարվեն 2014թ. հոկտեմբերին: Այս դեպքում ծրագրերը կարող են մեկնարկել 2014թ. նոյեմբերին և ավարտվել մինչև 2015թ. ապրիլի 30-ը (ծրագրային գործունեության ավարտի վերջնական ամսաթիվը):

Դիմումները պետք է ներկայացվեն անգլերեն լեզվով և ներառեն սահմանված ձևաչափով կազմված հետևյալ փաստաթղթերը.

- Դիմումի ձև (ծրագիր-առաջարկ)՝ MS Word և PDF ձևաչափերով
- Նախահաշիվ (ծրագրի բյուջե)՝ MS Excel և PDF ձևաչափերով
- Դրամաշնորհների կառավարման հարցաթերթ (միայն իրավաբանական անձանց համար)՝ միայն PDF ձևաչափով:

Հայաստանում գործող կազմակերպությունները (անհատները) դիմումի փաթեթը պետք է էլեկտրոնային կապի միջոցով ներկայացնեն Եվրասիա համագործակցություն հիմնադրամին (Հայաստան) հետևյալ հասցեով՝ grants@epfound.am.

Թուրքիայում գործող կազմակերպությունները (անհատները) դիմումի փաթեթը պետք է ներկայացնեն Հրանտ Դինք հիմնադրամին (Թուրքիա)՝ grants@hrantdink.org

Նախքան դիմումներ ներկայացնելը դիմող կազմակերպությունները/անհատները պետք է ծանոթանան Դրամաշնորհների դիմումներ ներկայացնելու ուղեցույցին:

Հայաստանում գործող կազմակերպությունները (անհատները) կարող են իրենց հարցերն ուղղել պրն. Վազգեն Կարապետյանին (հեռ.՝ +374 10 25 15 75 (ներքին համար՝ 105), էլ.փոստ՝ vkarapetyan@epfound.am):

Թուրքիայում գործող կազմակերպությունները (անհատները) կարող են իրենց հարցերն ուղղել օրիորդ Բուրջու Բեջերմենին (հեռ.՝ +90 212 240 33 61, burcubecermen@hrantdink.org):

«Աջակցություն Հայաստան-Թուրքիա կարգավորման գործընթացին»
ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:

www.armenia-turkey.net